

ՆՈՆԵՆՈՒ ՀՐԱԹԻԹԵՒ - ՊՏՂԱԿԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ
ԴԵՄ

Երևան 2012



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



ՆՈՆԵՆՈՒ ՀՐԱԹԻԹԵՒ - ՊՏՂԱԿԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ
ԴԵՄ

Երևան 2012



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



Յ.Լ.Թերլեմեզյան, գյուղատնտեսական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա.Յ.Ճատուրյան, գյուղատնտեսական
գիտությունների թեկնածու

Յ.Լ.Թերլեմեզյան, գյուղատնտեսական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա.Յ.Ճատուրյան, գյուղատնտեսական
գիտությունների թեկնածու

Նռնենու հրաթիթեռ-պտղակեր

Նռնենու հրաթիթեռ-պտղակերը (Euzophera punicaella Moor.) պատկանում է միջատների (Insecta) դասի թեփուկաթևների (Lepidoptera) կարգի հրաթիթեռների (Pyralidae) ընտանիքին: Այն համարվում է համեմատաբար նոր վնասատու, որի վրա մինչև 1937 թվականը հատուկ ուշադրություն չի դարձվել և նրա հասցրած վնասը վերագրվել է հիմնականում խնձորենու պտղակերին:



Այս տեսակը տարածված է աշխարհի տարբեր երկրներում, մասնավորապես՝ Բալկանյան թերակղզում, Ուկրաինայում, Մոլդովայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Յունաստանում, Թուրքիայում, Իրանում, Յնդկաստանում, Պակիստանում, Ադվանստանում, ինչպես նաև Միջին Ասիայում և

Կովկասում:

Հայաստանում նռնենու հրաթիթեռ-պտղակերը առաջին անգամ արձանագրվել է 1952 թվականին Յ.Ս.Ավետյանի կողմից:

Տարեցտարի մեծացելով իր տարածման արեալը՝ այս տեսակը վնասում է մի շարք պտղատու մշակաբույսերի: Ֆիտոֆագը վնասում է՝ խնձորենու, տանձենու, սերկևիլենու, ընկուզենու, դեղձենու, ծիրանենու, կեռասենու, նռնենու, թզենու, սալորենու, շլորենու, սև հաղարջենու պտուղներին: Բացի պտուղներից, թրթուրները սնվում են նաև ծառերի ենթակեղևով, երիտասարդ և մերկացած շվերով, որը հնարավորություն

Տպաքանակը՝ 250
Տպագրվել է՝ «1 Պրինտ» տպարանում

Նավետ ձևերից է նաև որսող գոտիների օգտագործումը, որի համար նախօրոք կտրվում է երկչերտ ծալքավոր ստվարաթուղթ՝ 8-12 սմ լայնությամբ ու կապվում է ծառերի բների և կմախքային ճյուղերի վրա: Հրաթիթեռի թրթուրները հաճույքով են մտնում այդ ծալքերի մեջ հարսնյակավորվելու համար: 7-10 օրը մեկ անհրաժեշտ է փոխել կապված գոտիները նորերով, իսկ հները պետք է անմիջապես այրել: Այս մեթոդը դրսևորել է որոշակի արդյունավետություն ոչ միայն այս վնասատուի, այլև այլ թեփուկաթևավորների դեմ:

Ազրոտեխնիկական միջոցառումներից արդյունավետ է այգիներում հողի վարելը, կուլտիվացիան, որոնց միջոցով մասնակիորեն վերացվում են մոլախոտերը, նվազում հողում և բուսական նմացորդների վրա ձմեռող վնասատուների քանակը:

Կենսաբանական միջոցառումներ: Նռնենու հրաթիթեռ-պտղակերի դեմ ֆերոմոնային թակարդների օգտագործումը կատարվում է վնասատուի զուգավորման խաթարման և հասունների քանակի հաշվառման միջոցով բուժման ժամկետների ճիշտ որոշման համար: Թակարդն իրենից ներկայացնում է եռանկյունաձև ծավված ստվարաթուղթ, որի մեջ դրված է ռետինե խողովակ, իսկ պատերին քսված է միջատաբանական սոսինձ: Ռետինե խողովակի մեջ գտնվում է քիմիական ճանապարհով ստացված նյութը՝ ֆերոմոնը, որն արձակում է վնասատուի էգի սեռական հոտ և գայթակղում է արուներին: Վերջիններս մտնելով



կարող է վնասել 3-4 պտղի:

Խնձորենու, սերկևիլենու, դեղձենու և ընկուզենու պտուղները այս ֆիտոֆագով վնասվում են հուլիս ամսից: Օգոստոսից մինչև հոկտեմբեր նռնենու հրաթիթեռ-պտղակերի թրթուրները առավել մեծ քանակությամբ հանդիպում են ընկուզենու և սերկևիլենու պտուղներում:

Վնասատուի թրթուրները խնձորի մեջ սնվում են միայն այն դեպքում, երբ պտուղը արդեն վարակված է խնձորենու պտղակերով:

Չմեռում են միջատի վերջին հասակի թրթուրները, սպիտակ նուրբ բոժոժներում, հիմնականում ծառի բնի, ճյուղերի ճեղքերում, չոր կիսապոկ կեղևների տակ, մասամբ որսող գոտիներում, թափված պտուղների մեջ ու տերևների տակ:

Չմեռած սերնդի թրթուրները հարսնյակավորվում են այնտեղ, որտեղ ձմեռում են, իսկ ամառային սերնդինը՝ ծառի կեղևի ճեղքերում, վնասված պտղի ներսում: Հարսնյակների զարգացումը զարնանը տևում է միջին հաշվով 16,5, իսկ ամռանը՝ 6,3 օր:

Թիթեռների թռիչքը զարնանը սկսվում է, երբ օդի միջին ջերմաստիճանը կազմում է 10,4-14,8°C և ավարտվում է հոկտեմբերի 3-րդ տասնօրյակում: Վեգետացիայի ընթացքում թռիչքը ընթանում է անընդմեջ: Թիթեռները ձվադրում են մեկական կամ փոքր խմբերով՝ ծառերի կեղևների, շվերի ու պտուղների վրա: Միջին պտղաբերությունը առավել բարձր է երրորդ սերնդի մոտ և կազմում է 136 ձու /առավելագույնը 200 ձու/,



Է տալիս վնասատուին զարգանալ և բազմանալ պտուղների բացակայության պայմաններում:

Նռնենու հրաթիթեռ-պտղակերը վնասում է նաև խաղողին: Առաջին և երկրորդ հասակի թրթուրները սնվում են ողկույզների վրա, իսկ հետագայում թրթուրները մտնում են խաղողահատիկի մեջ և սնվում պտղամսով, այնքան ժամանակ քանի դեռ սնունդ կա այդտեղ: Ձմեռող թրթուրներ արձանագրվել են մուսիֆիկացված խաղողահատիկներում: Եթե խաղողի ողկուզակերը ոստայն է գործում, ապա այս տեսակը ոստայն չի առաջացնում:

Վերջին տարիներին հրաթիթեռը դարձել է նռնենու առավել վտանգավոր վնասատուն, որը ոչնչացնում է բերքի մինչև 95 տոկոսը:

Կախված կլիմայական պայմաններից, նռնենու հրաթիթեռ-պտղակերը զարգանում է 2-5 սերնդով: 1-3-րդ սերնդի թրթուրները սնվում և զարգանում են նռնենու ենթակեղևով: Կան տվյալներ, որ վնասատուն սնվում է նաև ծաղիկներով, վնասելով հյութեղ և մենդալյութերով հարուստ ծաղկակալները:

4-5-րդ սերնդի թրթուրները մտնում են նռան պտղի մեջ հիմնականում բաժակից բացված ճեղքերից և միշտ չէ, որ հնարավոր է արտաքինից որոշել թե վնասված է արդյոք պտուղը:

Մտնելով պտղի մեջ թրթուրները սնվում են նրա պարունակությամբ /կեղևով և հատիկներով/՝ աղտոտելով իրենց արտաթորանքով, որն էլ նպաստում է սնկերի սպորների զարգացմանը՝ առաջացնելով պտղի փտում:

Մեկ պտղի մեջ կարող են սնվել մինչև 27 տարբեր հասակի թրթուրներ: Յետաքրքիր է, որ մեկ թրթուրը

իսկ ամենաքիչ ձվեր դնում են վնասատուի առաջին սերնդի թիթեռները, ընդամենը 44 ձու: Ոչ բոլոր դրված ձվերն են լինում կենսունակ: Յետազոտություններով պարզվել է, որ նռնենու հրաթիթեռ-պտղակերի ձվերի կենսունակությունը մոտ 83 տոկոս է:

Թիթեռների կյանքի տևողությունը կախված սերունդներից տևում է 7-17 օր:

Մեկ սերնդի զարգացումը 23-24°C օդի միջին օրական ջերմաստիճանի պայմաններում տևում է միջինը 31 օր, որից սաղմնային զարգացմանը ընկնում է 3,5, թրթուրային փուլին 21, իսկ հարսնյակին՝ 6,5 օր:

Մի շարք պտղատեսակների /նռնենի, սերկևիլենի, խնձորենի, դեղձենի/ այգիներում ծառերի բների վրա կատարված դիտումները ցույց են տվել, որ նռնենու հրաթիթեռ-պտղակերի առաջին և երկրորդ սերնդի թրթուրների զարգացումը տեղի է ունենում ծառերի ճյուղերի և բնի կեղևի տակ, որոնք սնվում են միայն ծառերի վեգետատիվ մասերով և չեն վնասում պտուղներին:

Այսպիսով, այս տեսակը ոչ միայն պտղակեր է, այլև որոշ չափով նաև կեղևակեր վնասատու:

Քանի որ հրաթիթեռ-պտղակերի 1 և 2-րդ սերնդի թրթուրները չեն վնասում պտուղներին, ապա սերկևիլենու, խնձորենու, դեղձենու և ընկուզենու պտուղների այդ ընթացքում վնասված լինելը պետք է վերագրել միայն խնձորենու պտղակերին:

Յրաթիթեռ-պտղակերի թրթուրները վերը նշված մշակաբույսերի պտուղներին վնասում են հուլիսի կեսերից: Պարզվել է, որ որքան ուշ են հասունանում պտուղները, այնքան բարձր է նրանց վնասվածությունը:

Պտղատու մշակաբույսերի վրա կապված որսող

թակարդի մեջ կպչում են պատերին քսված սոսինձին և սատկում: Արդյունքում բեղմնավորում ու ճվադրության պրոցեսը մասնակիորեն խաթարվում է և վնասատուի քանակը նվազում է:

Նռնենու հրաթիթեռ-պտղակերի քանակը պտղատու այգում նվազագույնի հասցնելու համար 1 հեկտարի հաշվով անհրաժեշտ է կախել 20-30 թակարդ, իսկ պայքարի արդյունավետ ժամկետները ճշտելու նպատակով բավարար է 2-3 թակարդը:

Մանրէակենսաբանական պատրաստուկներից այս վնասատուի 1-3 հասակի թրթուրների դեմ արդյունավետ է լեպիդոցիդը 1,0 կգ/հա ծախսի նորմայով /10 լիտր ջրին 10գր./:

Քիմիական միջոցառումներ: Նռնենու հրաթիթեռ-պտղակերի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է փոխելփոխ կիրառել քիմիական տարբեր խմբերի պատկանող պատրաստուկներ, վնասատուի կողմից հնարավոր դիմացկունության առաջացումը կանխելու նպատակով: Առավել արդյունավետ միջատասպաններից խորհուրդ է տրվում կիրառել դեցիս պրոֆի 0,1 կգ/հա /10լիտր ջրին 1գր./ կամ նուրբել-դ 1,5 լ/հա /10լ ջրին 15 մլ./ կամ կառատե գեոն 0,5 լ/հա /10լիտր ջրին 5 մլ/ կամ կալիպսո 0,3 լ/հա /10 լիտր ջրին 3 մլ/:



գոտիներում հրաթիթեռ-պտղակերի թրթուրները ի տարբերություն խնձորենու պտղակերի, հանդիպում են մեկ ամիս ուշ՝ օգոստոսի 1-ին տասնօրյակում, իրենց առավելագույնին հասնելով սեպտեմբերի 3-րդ և հոկտեմբերի 1-ին տասնօրյակներում, երբ խնձորենու պտղակերի թրթուրները հանդիպում են չնչին քանակությամբ:

Յրաթիթեռ-պտղակերի թրթուրները սերկևիլենու պտուղների մեջ են մտնում հիմնականում պտղի բաժակից: Թրթուրները սնվում են պտղամսով և սերմերով: Սնվելու ընթացքում դրանք անցուղիները լցնում են արտաթորանքով և պտուղները դառնում են գրեթե անօգտագործելի:

Վնասատուն ընկուզենու պտուղների միջուկի մեջ է մտնում պտղակորուսից, վնասված մասերից, մի մասն էլ կարող են սնվել և ներթափանցել կանաչ կեղևով:

Սերկևիլի մեկ պտղում թրթուրների թիվը հիմնականում լինում է 2-6, ընկուզի՝ 2-3, խնձորի՝ 1-2 հատ:

Պայքարի միջոցառումներ նռնենու հրաթիթեռ-պտղակերի դեմ

Այս վտանգավոր վնասատուի դեմ պայքարում անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավոր մեթոդները, մասնավորապես մեխանիկական, ագրոտեխնիկական, կենսաբանական և քիմիական միջոցառումները:

Մեխանիկական միջոցառումներն ուղղված են վնասված շվերի կտրմանը, բնի և ճյուղերի մաքրմանը, թափուկի հավաքմանը և ոչնչացմանը: Պայքարի արդյուն

